5387

Բ. ՍՈՐԿԻՆ

ԻՆՉ Ե ՀԱՐԿԱՎՈՐ ԻՄԱՆԱԼ
ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ
(ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐՎԱ ԲԱԺՆԻ)
ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՂԻՆ

Ա 25037

Հրատարակություն Պետաշխնայդրամարկղների յեվ Պետվարկի Հայաստանի Վարչության

ԵՐԵՎԱՆ 1937 Թ.

Պատ. խմբագիր՝ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
Թարգմանեց՝ Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Տեխ. ձեվ. յեվ սրբագ. Ա. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

Ռեկլամ-Հրատ. Բյուրո։ Պատվեր № 734.

Սևան-Զանգեզուրի տպարան Գլավլիտ № 376 Տիրաժ 5000

ՄԵՆՔ ՍՈՑԻԱԼԻԶՄ ԵՆՔ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԱՌԱՆՑ ԴՐՍԻ ՍՏՐԿԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԿԵՐԻ ՅԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԽՍՀՄ աշխատավորները կոմունիստական կուսակցության և ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր ՍՏԱԼԻՆԻ ղեկավարությամբ՝ տարեց-տարի խոշորագույն հաղթանակներ են տանում սոցիալիզմի կառուցման գործում։

Մեր յերկրում արդեն լրիվ չափով իշխում է տնտեսության սոցիալիստական ձևը և արտադրության միջոցների սոցիալիստական սեփականությունը։ Վերացված են շահագործող դասակարգերը, վոչնչացված է մարդու շահագործումը՝ մարդու ձեռքով, արագորեն բարձրանում է մեր յերկրի ժողովուրդների բարեկեցությունն ու կուլտուրականությունը։ Տեխնիկան մեր կադրերի կողմից յուրացնելու գործում ձեռք են բերվել խոշորագույն հաջողություններ։ Բայց այդ արդեն այժմ բավական չէ։ Կուսակցությունն ու կառավարությունը տեխնիկային տիրապետելու լոզունգը լրացրին նոր լոզունգով—բոլշեվիզմին տիրապետելու, կադրերի քաղաքական դաստիարակության լոզունգով։ Այդ կոչն ի նրանց լավ տեսնելու թշնամուն—ինչպես էլ նա քողարկված լինի։

Համաժողովրդական ստախանովական շարժման հզոր զարգացումը բերում է յերկրին սոցիալիստական առատությամբ լեցուն կյանք։ Ամրանում է մեր յերկրի հզորությունը, վորը խաղաղության հենարանն է հանդիսանում ամբողջ աշխարհում։

ԽՍՀՄ աշխատավորների պատմական նվաճումներն արտացոլված և գրված են Ստալինյան Սահմանադրության մեջ։

Մեր սոցիալիստական հայրենիքի հզորությունն ու մեծությունը ձեռք են բերվել առանց դրսի ստրկացուցիչ վարկերի և փոխառությունների։ Ֆաբրիկաները, գործարանները, հանքահորերը, խորհտնտեսությունները և ՄՏԿ, դպրոցները, մանկատները, հիվանդանոցները, սանատորիաները, թատրոնները,

ակումբները, բնակելի տները և բազմաթիվ այլ բաներ կառուցված են մեր յերկրի ներքին միջոցներով, սոցիալիստական տնտեսության աճող կուտակումների հաշվով։

Սոցիալիստական շինարարության ֆինանսավորման գործում փոքր դեր չեն խաղում Միության աշխատավորների անձնական խնայողությունները։ ԽՍՀՄ աշխատավոր մասսաները ամեն տարի հսկայական խանդավառությամբ միլիարդավոր գումարներ են փոխ տալիս իրենց պետությանը։

Փոխառություններից ստացված միջոցները կապիտալիստական յերկրներում ծախսվում են թալանչիական պատերազմներ նախապատրաստելու և վարելու համար, չինովնիկական—վոստիկանական ապարատը պահելու համար, վորի գլխավոր խնդիրն է հանդիսանում կապիտալիստների իշխանության պահպանումը, հեղափոխական շարժման ճնշումը, աշխատավոր մասսաների ստրկացումը։ Իսկ մեզ մոտ փոխառություններից ստացված միջոցները սոցիալիստական պետությունը ծախսում է ժողովրդական տնտեսության և կուլտուրայի անշեղ վերելքի, յերկրի աշխատավոր մասսաների նյութական բարեկեցությունն անընդհատ բարձրացնելու նպատակների համար։

Խորհրդային Միության աճած ֆինանսական հզորության, ռուբլու արժեքի ամրացման և գների իջեցման հիման վրա՝ կառավարությունը 1936 թվականին վորոշում ընդունեց նախկիններում բաց թողնված պետական փոխառությունների կոնվերսիայի և այդ կապակցությամբ՝ այդ փոխառությունների պարտատոմսերը Յերկրորդ հնգամյակի (չորրորդ տարվա բաժնի) փոխառության պարտատոմսերով փոխանակելու մասին։

Փոխանակումն ունի հսկայական նշանակություն։ Նա համապատասխան է տնտեսական և կուլտուրական շինարարության և մեր սոցիալիստական հայրենիքի պաշտպանության հզորությունն ամրացնելու նոր խնդիրներին, նա համապատասխան է ռուբլու արժեքի հետագա ամրացման և շինարարության արժեքի իջեցման խնդիրներին։

Կոնվերսիայի հետևանքով՝ ազգաբնակչության մոտ զանազան փոխառությունների մեծ քանակությամբ պարտատոմսերի փոխարեն մնում են միասնական փոխառության—Յերկրորդ Հնգամյակի (չորրորդ տարվա բաժնի) փոխառության պարտատոմսեր։

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՓՈԽԱՆԱԿԵԼ ՆԱԽԿԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՎ

Ինդուստրացման 3-րդ փոխառության, «Հնգամյակը չորս տարում» փոխառության, Հնգամյակի Յերրորդ վճռական տարվա փոխառության, Հնգամյակի Չորրորդ ավարտական տարվա փոխառության և Յերկրորդ Հնգամյակի (առաջին, յերկրորդ և յերրորդ տարիների բաժնի) փոխառության պարտատոմսերի փոխանակումն սկսվել է 1936 թվականի սեպտեմբերի 1-ից և շարունակվելու յե մինչև 1937 թվականի սեպտեմբերի 1-ը։ Այդ ժամկետից հետո նախկին փոխառությունների պարտատոմսերը կորցնում են իրենց ուժը և չեն ընդունվի փոխանակման համար։

Փոխանակումը չպետք է հետաձգել մինչ վերջին ժամկետը, որովհետև արդեն 1937 թվականի մայիսի 25-ին տեղի յե ունենալու Յերկրորդ Հնգամյակի (չորրորդ տարվա բաժնի) փոխառության շահումների առաջին խաղարկությունը։ Իրենց պարտատոմսերն այդ ժամկետին չփոխանակած նախկին փոխառությունների պարտատոմսատերերը չեն կարող մասնակցել շահումների խաղարկությանը։

Պարտատոմսերի փոխանակումը մինչ 1937 թվականի մարտի 1-ը տեղի յեր ունենում անմիջականորեն ձեռնարկություններում, հիմնարկություններում, գյուղխորհուրդներում և կոլտնտեսություններում։ 1937 թվականի մարտի 1-ից փոխանակումը տեղի յե ունենում միայն քաղաքների կենտրոնական խնայդրամարկղներում, շրջանային խնայդրամարկղներում, նայելով քաղաքների և գյուղական վայրերի 1-ին կարգի բոլոր խնայդրամարկղներում։

Պարտատոմսերը փոխանակվում են առանց գումարի սահմանափակման, առանց պարտատոմսատերերի կողմից վորևե գրավոր դիմումներ տալու և առանց նրանց ազգանունները ցուցակագրելու։

Յեթե նախկին փոխառությունների պարտատոմսերը հանձնված են յեղել խնայդրամարկղին ի պահ, ապա այդպիսիները նոր փոխառության պարտատոմսերով փոխանակելու համար պիտի անձամբ դիմել նույն խնայդրամարկղին, ունենալով իր հետ

պահպանման վկայականը։ Անձնապես ներկայանալու հնարավորություն չլինելու դեպքում՝ անհրաժեշտ է գրավոր դիմում ուղարկել խնայդրամարկղին, որի մեջ պիտի ցույց տալ, թե ինքն ինչպիսի պարտատոմսեր (տոկոսաբեր կամ անպայման շահող) և ինչ արժողությամբ (500, 300, 200, 100, և 50 ռուբլիանոց) և ցանկանում ստանալ։ Դիմումի հետ միասին անհրաժեշտ է խնայդրամարկղին ուղարկել և պահպանման վկայականն, առանց որի պարտատոմսերը չեն կարող փոխանակվել։

Նախկին փոխառությունների այն պարտատոմսերը, որոնց գրավի դիմաց փոխատվություններ են ստացվել խնայդրամարկղում, փոխանակվում են նույնպես փոխառուի անձնականներկայությամբ՝ կամ ըստ նրա գրավոր դիմումի։ Փոխանակումը տեղի չէ ունենում միայն ժամկետն արդեն անցած փոխատվությունը մարելու պայմանով (փոխատվությունները տրվում էին մեկ տարուց վոչ ավելի ժամկետով)։ Փոխատվությունը կարող է մարվել փոխառուի ցանկությամբ՝ կանխիկ դրամով կամ գրավ դրված պարտատոմսերով համապատասխան գումարով։

ՊԱՀԱՆՋԵՑԵՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՆՁՆԵՆ ԿՈԼԼԵԿՏԻՎ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՄԲ ԶԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ

Ըստ Յերկրորդ Հնգամյակի (չորրորդ տարվա բաժնի) փոխառության կոլեկտիվ բաժնեգրության պայմանների՝ փոխառությանը բաժնեգրված բանվորներն ու ծառայողները, նայելով կոոպերացված տնայնագործները վերջին մուծումը վճարում են 1937 թվականի ապրիլի յերկրորդ կեսի աշխատավարձից։ Հետևապես ձեռնարկության կամ հիմնարկության հաշվապահությունը պարտավոր է հանձնելու պարտատոմսերն այդ բաժնեգիրներին 1937 թ. ապրիլի յերկրորդ կեսի աշխատավարձը վճարելու հետ միաժամանակ։

Այն դեպքում, յեթե բաժանորդը ձեռնարկությունում կամ հիմնարկությունում թողնում է աշխատանքը մինչ փոխառության բաժանորդագրության լրիվ վճարումը վերջացնելը,—հաշվարկման ժամանակ նրան պիտի տրվի մուծումների այն գումարի պարտատոմսեր, որպիսին վճարված է յեղել նրա կողմից

տվյալ ձեռնարկությունում կամ հիմնարկությունում աշխատանքը թողնելու մոմենտին։

Կոլտնտեսականներին և մենատնտեսներին իրենց բաժանորդագրությամբ պարտատոմսերը հանձնելու պարտականությունն ընկնում է գյուղխորհրդի վրա, վորը յուրաքանչյուր կոլտնտեսականին և մենատնտեսին պարտատոմսեր տալիս է իր բաժանորդագրությունը վճարելու չափով։

Յերկրորդ Հնգամյակի (չորրորդ տարվա բաժնի) փոխառության պարտատոմսերն իրենց բաժանորդագրության տեղում վորևէ պատճառներով ժամանակին չստացող բաժանորդները, կարող են այդպիսիներն ստանալ քաղաքի կենտրոնական խնայդրամարկղում կամ շրջանային խնայդրամարկղում 1938 թվականի հունիսի 1-ից վոչ ուշ։ Այդ դեպքերում՝ պարտատոմսերն ստանալու համար բաժանորդն իր կողմից վճարված մուծումների գումարի մասին տեղեկանք պիտի ներկայացնի խնայդրամարկղին՝ ձեռնարկությունից, հիմնարկությունից կամ գյուղխորհրդից։

Յերկրորդ Հնգամյակի (չորրորդ տարվա բաժնի) փոխառության բաժնեգրությամբ պարտատոմսեր չստացած բաժանորդները 1938 թվականի հունիսի 1-ից կորցնում են այդպիսիներն ստանալու իրավունքը։

Քաղաքների կենտրոնական խնայդրամարկղներում և շրջանային խնայդրամարկղներում պահվում են նայել բաժանորդներին չհանձնված և Յերկրորդ Հնգամյակի (չորրորդ տարվա բաժնի) փոխառությունով փոխանակման յենթակա նախկին փոխառությունների պարտատոմսեր։ Այդ պարտատոմսերը կարող է ստանալ անձամբ ինքը բաժանորդը խնայդրամարկղում, կամ, ըստ իր գրավոր դիմումի՝ կարելի յե փոստով ուղարկել իրեն մինչև 1937 թվականի սեպտեմբերի 1-ը։

Բաժանորդների կողմից չստացված նախկին փոխառությունների պարտատոմսերը 1937 թվականի սեպտեմբերի 1-ից կորցնում են իրենց ույժը։

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ (ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐՎԱ ԲԱԺՆԻ) ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՆԵՐԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շահումների խաղարկություններ և մարման խաղարկություններ կատարելու համար՝ Յերկրորդ Հնգամյակի (չորրորդ տարվա բաժնի) փոխառությունը ստորաբաժանվում է կարգերի —100 միլիոնական ռուբլի յուրաքանչյուր կարգում։ Փոխառության անպայման շահող մասի յուրաքանչյուր կարգը կազմված է 20 հազար սերիաներից (№ 1-ից մինչև № 20000), իսկ յուրաքանչյուր սերիայում կան 5 հազար ռուբլու պարտատոմսեր (№ 1-ից մինչև № 50)։ Յեթե վորևե կարգում յեղած այս կամ այն սերիան բաց է թողնված 100-ական ռուբլու արժողությամբ պարտատոմսերով, ապա, հետևապես սերիայում կան 50 պարտատոմսեր—№ 1-ից մինչև № 50։ Իսկ յեթե փոխառության սերիան բաց է թողնված 50-ական ռուբլու արժողությամբ պարտատոմսերով, ուրեմն սերիայում կան 100 պարտատոմսեր, վորոնցից յուրաքանչյուր յերկու պարտատոմսերն ունեն միատեսակ համարներ—№ 1-ից մինչև № 50։ Վերջապես, յեթե փոխառության սերիան բաց է թողնված 500 ռուբլու արժողություն ունեցող պարտատոմսերով, ուրեմն այդ սերիան բաղկացած է 10 պարտատոմսերից, բայց յուրաքանչյուր պարտատոմսին հատկացված է հինգ հերթական համարներ՝ որինակ № 1, 2, 3, 4, 5 և այլն մինչև № 50։

20 տարվա ընթացքում տեղի կունենան փոխառության անպայման շահող մասի շահումների 80 խաղարկություն—մեկական խաղարկություն յուրաքանչյուր յեռամսյակում։ Այդ ժամկետի ընթացքում ամեն մի պարտատոմս անպայման շահում է։

Փոխառության անպայման շահող մասի շահումների խաղարկությունները տեղի յեն ունենում, մեկ կարգի համար, այսինքն՝ փոխառության 100 միլիոն ռուբլու համար։ Քանի վոր ամեն մի կարգը բաղկացած է սերիաների միատեսակ համարներից և պարտատոմսերի միատեսակ համարներից, ուրեմն մեկ կարգում շահած պարտատոմսերը համարվում են շահած բոլոր կարգերում։

Մեկ կարգի, այսինքն՝ փոխառության ամեն մի 100 միլիոն ռուբլու առաջին չորս խաղարկություններից յուրաքան-

չյուրում կխաղարկվի հինգ հազար շահումներ 824,600 ռուբլու գումարով, նույն թվում՝ մեկ շահում 3000 ռուբլու, 5 շահում 1000-ական ռուբլու, 50 շահում 500-ական ռուբլու, 1000 շահում 200-ական ռուբլու և 3944 շահում 150-ական ռուբլու։ Հետագա չորս խաղարկություններից յուրաքանչյուրում (5-դից մինչև 8-րդը ներառյալ) կխաղարկվի 5300-ական շահումներ 869.600 ռուբլու գումարով։ Հետագայում շահումների քանակը յուրաքանչյուր խաղարկությունում ավելի և ավելի կմեծանա։

Յեթե վորևե սերիայի պարտատոմսի մի համարին կընկնի 3000 ռուբլի, 1000 ռուբլի կամ 500 ռուբլու շահում, ապա այդ սերիայի պարտատոմսերի բոլոր մնացած համարները շահում են 150-ական ռուբլի։ Իսկ սերիայի այս կամ այն համարին 200 ռուբլու կամ 150 ռուբլու շահում ընկնելու դեպքում՝ այդպիսի շահումը վճարվում և այդ սերիայի պարտատոմսերի բոլոր 50 համարներով։

Շահումները մատնանշված չափով վճարվում են 100 ռուբլու արժողություն ունեցող պարտատոմսերի համար։ Իսկ 500 ռուբլու, 300 ռուբլու և 200 ռուբլու արժողություն ունեցող այն պարտատոմսերի համար, վորոնք համապատասխանաբար ունեն հինգ, յերեք և յերկու համարներ, վճարվում են միանգամից հինգ, յերեք կամ յերկու շահում, վորպիսիք միաժամանակ ընկնում են պարտատոմսի վրա նշանակված ամեն մի համարին։ Որինակ՝ 500 ռուբլու արժողություն ունեցող պարտատոմսին կարող է ընկնել մեկ շահում 3000 ռուբլու և չորս շահում 150-ական ռուբլու, կամ մեկ շահում 1000 ռուբլու և չորս շահում 150-ական ռուբլու, կամ մեկ շահում 500 ռուբլու և չորս շահում 150-ական ռուբլու, կամ հինգ շահում 200-ական ռուբլու, կամ հինգ շահում 150-ական ռուբլու։

50, 25, և 10 ռուբլու արժողությամբ պարտատոմսերն ամբողջ հարյուր ռուբլիանոց պարտատոմսի մասերն են հանդիսանում։ Այդ պատճառով հիշյալ պարտատոմսերից յուրաքանչյուրն իրավունք և տալիս համապատասխանաբար ստանալու հարյուր ռուբլիանոց պարտատոմսին ընկած շահումի կեսը, մեկ քառորդը կամ մեկ տասնորդական մասը։

1937 թվականին կայանալու յե Յերկրորդ Հնգամյակի (չորրորդ տարվա բաժնի) փոխառության շահումների 5 խաղարկություն։

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՍՏԱՆԱԼ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Անպայման շահող մասի պարտատոմսատերերը փոխառության ամբողջ յեկամուտն ստանում են շահումների ձևով։

Շահումների աղյուսակներն ամեն մի խաղարկությունից հետո տպագրվում են լրագրներում, նայելով հրատարակվում են առանձին։ Ձեռնարկություններին, հիմնարկություններին և գյուղխորհուրդներին աղյուսակներով մատակարարում են խնայողական դրամարկղները։ Այդ աղյուսակներով ամեն մարդ անձամբ ինքը կարող է ստուգել, թե շահել են արդյոք իր պարտատոմսերը։

Պետական փոխառությունների պարտատոմսատերերի հարմարության համար՝ բոլոր հանրապետական, յերկրային և մարզային կենտրոններում, խնայողական դրամարկղների վարչություններին կից կազմակերպված են «շահումների ստուգման բյուրոներ»։ Պարտատոմսատերերն իրենց պարտատոմսերի սիստեմատիկ ստուգումը կարող են հանձնարարել այդ «բյուրոներին»։

«Շահումների ստուգման բյուրոյի» սպասարկումից ոգտվելու նպատակով՝ պետք է միայն ամեն մի պարտատոմսի համար լրացնել հատուկ քարտ և այդ քարտերն ուղարկել «բյուրոյին»։ Ըստ այդ քարտերի՝ «բյուրոն» շահումների աղյուսակներով ստուգում է պարտատոմսերը փոխառության ժամկետի ամբողջ ընթացքում և այդ պարտատոմսերին ընկած շահումների մասին հայտնում է պարտատոմսատերերին։ Քարտերը վաճառվում են բոլոր խնայողական դրամարկղներում։

Տոկոսաբեր մասի պարտատոմսատերերը փոխառության յեկամուտն ստանում են տոկոսների ձևով՝ ըստ կտրոնների։ Տոկոսաբեր մասի յուրաքանչյուր պարտատոմս ունի 20 կտրոն, վորոնցից ամեն տարի, սկսած 1937 թ. սեպտեմբերի 1-ից, վըճարվում է միայն մեկ կտրոն։ Յուրաքանչյուր կտրոնի արժեքը կազմում է պարտատոմսերի անվանական արժեքի 4 տոկոսը, այսինքն՝ հարյուր ռուբլիանոց պարտատոմսի կտրոնով վճարվում է 4 ռուբլի, հինգ հարյուր ռուբլիանոց պարտատոմսի կըտրոնով 20 ռուբլի, 50 ռուբլիանոց պարտատոմսի կտրոնով — 2 ռուբլի և այլն։

Շահումների վճարումն սկսվում է խաղարկությունը տեղի ունենալուց և շահումների պաշտոնական աղյուսակը լրագրներում հրապարակվելուց հետո, իսկ կտրոնների վճարումն սկսվում

և յուրաքանչյուր կտրոնի վրա նշված որից։ Շահած պարտատոմսերն ու կտրոնները վճարման համար կարող են ներկայացվել մինչև 1957 թվականի սեպտեմբերի 1-ը։

150 և 200-ական ռուբլու շահումներն ու կտրոնները վճարվում են քաղաքների կենտրոնական խնայողական դրամարկղների կողմից, շրջանային խնայողական դրամարկղների կողմից և I և II կարգի բոլոր խնայդրամարկղների կողմից։ 500-ական ռուբլու շահումները վճարվում են նույն խնայդրամարկղների կողմից, բացի II կարգի խնայդրամարկղներից։ 1000-ական ռուբլու շահումները վճարվում են միայն քաղաքների կենտրոնական խնայողական դրամարկղների կողմից և շրջանային խնայդրամարկղների կողմից, իսկ 3000-ական ռուբլու շահումները—պետաշխնայդրամարկղների և պետական վարկի Գլխավոր Վարչության կողմից՝ Մոսկվայում, ուր շահած պարտատոմսերն ուղարկվում են խնայդրամարկղների կողմից՝ պարտատոմսատերերի հանձնարարությամբ։

Պարտատոմսերն ու նրանցից ստացվող յեկամուտները ազատված են վորևե համապետական և տեղական հարկերով և տուրքերով հարկվելուց, նույն թվում նաև պարտատոմսերը ժառանգաբար անցնելու հարկից։

ԶԳՈՒՅՇ ՊԱՀԵԼ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ

Պարտատոմսերը պետք է պահել զգույշ։ Պարտատոմսերը կորցնելու դեպքում, ինչպես և դրամը կորցնելիս՝ չի կարելի վերականգնել իր իրավունքը պարտատոմսերի համար։

Պարտատոմսերի անվթարությունն ապահովելու լավագույն միջոցն է՝ պահ տալ նրանց խնայդրամարկղին։

Պարտատոմսատերն իրավունք ունի ստանալու իր կողմից խնայդրամարկղներին պահ տրված պարտատոմսերին ընկած բոլոր շահումները։ Պարտատոմսերն ընդունելու համար խնայդրամարկղը տալիս է պահպանման վկայական, վորում հիշատակվում են բոլոր պահ տրված պարտատոմսերը։

Խնայդրամարկղներին պահ տրված պարտատոմսերի վրա տարածվում են այն բոլոր արտոնությունները, վորոնք սահմանված են խնայդրամարկղներին տրվող դրամային ավանդների համար։ Ցերաշխավորվում է պարտատոմսերի պահպանման լիակատար գաղտնապահությունը և անձեռնմխելիությունը։ Պարտատոմսերի վրա կալանք դնելը կամ նրանց մասին տեղեկանքներ

տալը կարող են տեղի ունենալ միայն քրեական գործերի դատական կամ քննչական մարմինների պահանջներով։ Պարտատոմսատիրոջ մահվան դեպքում՝ կիրառվում է պարտատոմսերը ժառանգելու շատ հասարակ կարգ։ Պահպանման վկայականը կորցնելու ժամանակ վոչ վոք չի կարող նրանով ոգտվել, վորովհետև վկայականն անվանական է և պարտատոմսատերը միշտ էլ կարող է վերականգնել այդ վկայականը և ստանալ նոր պահպանման վկայական նույն խնայդրամարկղից։

Պարտատոմսերը պահելու համար խնայդրամարկղները դանձում են փոքրիկ վճար։

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԳՐԱՎԻ ԴԻՄԱՑ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՍՏԱՆԱԼ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընկեր ՍՏԱԼԻՆԻ նախաձեռնությամբ 1936 թվականի հուլիսի 20-ին որենք հրատարակվեց պետական ներքին փոխառությունների պարտատոմսերի գրավի դիմաց խնայդրամարկղների կողմից փոխատվություններ տալու նոր կարգի մասին։

Մեր սոցիալիստական հայրենիքի ֆինանսական հզորության աճը, հաջողությունները պետական փոխառությունների զարգացման գործում և փոխառություններ պահողների սպասարկման ամբողջ գործի հետագա բարելավման խնդիրներն ավելորդ դարձրին պարտատոմսերի գրավի դիմաց փոխատվություններ ստանալու նախկիններում գոյություն ունեցող սեղմողական կարգը, վորի ժամանակ թույլտվություն տալիս ենք միայն պետական վարկին և խնայողական գործին Ոժանդակող Հանձնաժողովը։

1937 թվականի մարտի 1-ից պարտատոմսերի գրավի դիմաց փոխատվություններ տրվում են անարգել կերպով։

Ամեն մի պարտատոմսատեր, յերբ էլ ցանկանա, կարող է պարտատոմսերի գրավի դիմաց փոխատվություն ստանալ խնայդրամարկղում պարտատոմսերի անվանական արժեքի 30 %-ի չափով։ Պարտատոմսերը գրավ ընդունելու համար պարտատոմսատիրոջ տրվում է գրավադրման անվանական անդորրագիր։

Փոխատվությունը տրվում է վեց ամսից վոչ ավել ժամկետով, ընդվորում փոխատվություն ստացողը կարող է մարել իր պարտքն այդ ժամկետի ընթացքում մաս-մաս՝ կամ միանգամից։

Պարտատոմսատերը անպայման շահող մասի գրավ դրված

պարտատոմսերով շահումներ չի կարող ստանալ։ Փոխատվությունը մարելու չափով նրան տրվում է անպայման շահող մասի (այլ համարների) նոր պարտատոմսեր, շահումների հետագա խաղարկություններին մասնակցելու իրավունքով։

Փոխատվությունն ամեն անգամ մաս-մաս մարելու ժամանակ պարտատոմսերի մի մասն ստանալու հնարավորությունը մեծ օգուտ է տալիս փոխառուին, վորովհետև դրանով ապահովվում է շահումների խաղարկությանը մասնակցելը՝ դեռ մինչ փոխատվությունն ամբողջությամբ մարելը։ Այդ պատճառով, հենց իրենց, փոխառուների շահերի համար, պետք է վոր դեթ մասամբ մարել իրեն փոխատվությունը մինչ յուրաքանչյուր խաղարկության ժամկետի վերահասնելը։

Պարտատոմսատերը տոկոսաբեր մասի գրավ դրված պարտատոմսերի կտրոններով չի կարող յեկամուտ ստանալ պարտատոմսերի գրավի ընթացքում։ Տոկոսաբեր մասի գրավ դրվող պարտատոմսերը պիտի իրենց կից ունենան վճարման ամենամոտիկ ժամկետի կտրոնը և նրանց հաջորդող բոլոր կտրոնները։ Տոկոսաբեր մասի պարտատոմսերի գրավի դիմաց տրված փոխատվությունների մարման չափով՝ տրվում է պարտատոմսատիրոջը նույն մասի պարտատոմսեր՝ նույնպես վճարման ամենամոտիկ ժամկետի կտրոնով։ Դրա հետ միասին պարտատոմսատիրոջը վճարվում է պարտատոմսերը գրավ դնելու որն այն ընթացիկ կտրոնով աճած յեկամուտը, վորը մնացել ներ գրավ դրված պարտատոմսերին կից և նրանից գանձվում է փոխատվությունը լրիվ կամ մասամբ մարելու որն այն ընթացիկ կտրոնով աճած յեկամուտը, վորը կցված է պարտատոմսատիրոջ կողմից ստացվող նոր պարտատոմսին։

Յեթե, որինակ, տոկոսաբեր մասի պարտատոմսատերը 500 ռուբլու պարտատոմսերի գրավի դիմաց 1937 թվականի հունիսի 1-ին ստանում է 150 ռուբլու փոխատվություն, ապա նրա կողմից գրավ դրվող պարտատոմսերը իրենց կից պիտի ունենան վճարման ամենամոտիկ ժամկետի կտրոն, այսինքն՝ 1937 թվականի սեպտեմբերի 1-ի ժամկետի կտրոնը և բոլոր հաջորդ կտրոնները։ Բայց 1937 թ. սեպտեմբերի 1-ի ժամկետի կտրոնն իր մեջ առնում է փոխառության յեկամուտն ամբողջ տարվա համար—1936 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1937 թ. սեպտեմբերի 1-ը, իսկ փոխառուին այդ կտրոնով պատկանում է միայն մինչ պարտատոմսերը գրավ դնելու ժամանակի համար

հասնող յեկամուտը, այսինքն՝ 1936 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 1937 թվականի հունիսի 1-ը (9 ամսվա համար)։ Հետևապես կարոնների 20 ռուբլու արժեքից (պարտատոմսերի անվանական արժեքի 4 %-ը) փոխառուին պատկանում է միայն 16 ռուբլի։

Փոխատվությունը վեց ամսից հետո մարելու ժամանակ, այսինքն՝ 1937 թվի դեկտեմբերի 1-ին, փոխառուին պարտատոմսեր են տրվում փոխատվությունը մարելուց հետո վճարման ամենամոտիկ ժամկետի կտրոնով, այսինքն՝ 1938 թ. սեպտեմբերի 1-ի ժամկետի կտրոնով և բոլոր հաջորդ կտրոններով։ Բայց այդ դեպքում 1938 թ. սեպտեմբերի 1-ի ժամկետի կտրոնով, վորն իր մեջ է առնում 1937 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1938 թվի սեպտեմբերի 1-ը ժամանակի համար հասնող պարտատոմսի յեկամուտը, փոխառուին պատկանում է միայն փոխատվությունը մարելուց հետո յեղած ժամանակի համար հասնող յեկամուտը, այսինքն՝ 1937 թ. դեկտեմբերի 1-ից (9 ամսվա համար), այլ վոչ թե ամբողջ տարվա համար։ Հետևապես, կտրոնների 20 ռուբլու արժեքից պարտատոմսատերը կստանար իրեն չպատկանող ավելորդ գումար 3 ամսվա համար, վորը կազմում է 5 ռուբլի (20 ռուբլու մեկ քառորդը)։

Այդպիսով, մեր առաջ բերված օրինակում, փոխառուն պարտատոմսերը գրավ դնելիս՝ հանձնեց խնայդրամարկղին այնպիսի կտրոններով պարտատոմսը (1937 թ. սեպտեմբերի 2-ի ժամկետով), վորոնցով նա արդեն իրավունք ձեռք բերեց մինչ պարտատոմսերը գրավ դնելն յեղած ժամանակի համար հասանելիք 15 ռ. չափով յեկամուտն ստանալու, իսկ փոխատվությունը մարելիս՝ ստացավ նոր պարտատոմսեր այնպիսի կտրոններով (1938 թ. սեպտեմբերի 1-ի ժամկետով), վորոնց մեջ է մտնում պարտատոմսերը գրավի մեջ յեղած ժամանակի համար հասանելիք նրան չպատկանող 5 ռուբլու չափով յեկամուտը։ Այդ պատճառով՝ փոխատվությունը մարելու ժամանակ, վորպես վերջնական հաշվեհարդար, ստացողին վճարվում է մատնանշված 15 ռուբլին՝ հանած 5 ռուբլի, այսինքն՝ 10 ռուբլի, և, բացի այդ 1938 թ. սեպտեմբերի 1-ին կտրոններով կստանա 20 ռուբլի։

Նման հաշվարկում է արվում փոխառուի հետ նաև փոխատվությունը մաս-մաս մարելիս յուրաքանչյուր տրվող պարտատոմսի համար։

Փոխատվությունը լրիվ կամ մաս-մաս մարելիս պարտատոմսատիրոջ տրվում են այն մասի պարտատոմսեր, ինչպիսին դրավ են դրվել նրա կողմից, իսկ կուպյուրները—ըստ պարտատոմսատիրոջ ընտրության, բայց յուրաքանչյուրը 50 ռուբլուց վոչ պակաս։ 50 ռուբլու արժողություն ունեցող պարտատոմս ստանալու համար անհրաժեշտ է և մասամբ փոխատվության մուծել 15 ռուբլի (հիսուն ռուբլիանոց պարտատոմսի անվանական արժեքի 30%-ը)։ Այդ պատճառով փոխատվությունը մարելու յուրաքանչյուր մուծում 15 ռուբլուց պակաս չպիտի լինի և պիտի արվի այնպիսի գումարներով, վորպեսզի պարտատոմսերի վերադարձը հնարավոր լինի 50 ռուբլուց վոչ պակաս կուպյուրներով։

Պարտատոմսատերը 25 և 10 ռուբլու արժողություն ունեցող պարտատոմսեր կարող է ստանալ միայն փոխատվությունն ամբողջությամբ մարելու դեպքում։ Չեբը չէ կարելի ավելի խոշոր արժողություն ունեցող պարտատոմսերով զորձը վերջացնել։

Փոխատվություններ տրվում են խնայողական դրամարկղին պարտատոմսեր ներկայացնող անձի անվան։ Մուծումներն և մասամբ փոխատվության՝ ընդունվում են խնայողական դրամարկղների կողմից ինչպես անմիջականորեն հենց փոխառուից, այնպես և փոխառուի հավատարմագիրն ունեցող այլ անձանց միջոցով։

Փոխատվությունից ոգտվելու համար դանձվում է ամսական կես տոկոս՝ փոխատվության գումարից։ Տոկոսները նախապես դանձվում են փոխատվությունը տալու ժամանակ այն ժամկետի համար, վորքան ժամանակով փոխատվություն և վերցնում պարտատոմսատերը։ Եթե փոխատվությունը լրիվ կամ մասամբ մարվում և մինչ այդ ժամկետն անցնելը, ապա պարտատոմսատիրոջ վերադարձվում են փոխատվության մարված մասի ավելորդ դանձված տոկոսները։

Վեց ամսվա ընթացքում չվերադարձված փոխատվությունների համար դանձվում է մեկ տոկոս յուրաքանչյուր ժամկետանց ամսվա համար, սկսած վեցամսյա ժամկետն անցնելու որից։

Պարտատոմսերի դրավի դիմաց փոխատվություններ տրվում են քաղաքների կենտրոնական խնայողական դրամարկղների կողմից, շրջանային խնայդրամարկղների կողմից։ Բացի այդ, փոխատվություններ տալու իրավունք է վերապահված I կարգի խնայողական դրամարկղներին։

341

[054.]

Պարտատոմսերի գրավի դիմաց փոխատվություններ ստանալու կառավարության կողմից սահմանված նոր կարգը համապատասխան է աշխատավորների շահերին, կարիքի դեպքում հեշտացնում է պարտատոմսերի գրավի դիմաց փոխատվության ձևով անարգել և արագ կերպով անհրաժեշտ դրամական ոգնություն ստանալը։ «Բայց այդ միայն ժամանակավոր գրավ է, որովհետև մեր յերկրի վոչ մի դիտակից աշխատավոր չի բաժանվի պետական ներքին փոխառությունների իր պարտատոմսերից, վորոնք մի կողմից յերաշխավորում են նրան իր խնայողությունների ապահով և հուսալի պահպանումը, իսկ մյուս կողմից վկայում են, վոր նա իր սեփական խնայողություններով անձնապես մասնակցում է սոցիալիստական շինարարության և յերկրի պաշպանությունն ամրացնելու գործի ոգնությանը»։ (Գ. ԳՐԻԳՈՆՅՈՆ)։

A II 25037

ՀԱՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220025037